ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ Արագածոտնի մարզ Կարբի համայնք

2015 թվականի ապրիլի 29-ին ժամը 12:00-ին Կարբի համայնքի ղեկավարի աշխատասենյակում տեղի ունեցավ ՀՀ Արագածոտնի մարզի <<Նիգավա>> ՍՊԸ-ին պատկանող <<Նիգավա>>ՓՀԷԿ-ի վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության հանրային քննարկումներ:

Մասնակցում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի փորձագետ՝ Զ. Զուռնաչյանը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի փոխտնօրեն՝ Ս. Փահլևանյանը, ՀՀ Արագածոտնի մարզի Կարբի համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ռ. Հակոբյանը, աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Ա. Մարգարյանը, ավագանու անդամ և համայնքի բնակիչներ:

Ելույթ ունեցան՝

«Նիգավա» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ն Դավթյանը, ներկայացրեց աշխատանքային նախագիծը, նրանում ներառված բնապահպանական միջոցառումները և պատասխանեց ներկա գտնվող մասնակիցների կողմից առաջադրվող հարցերին:

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>>ՊՈԱԿ-ի փորձագետ՝ Զ. Զուռնաչյանը հարց բարձրացրեց ոռոգման համակարգի, շրջակա միջավայրի վրա ազդեցության, հողատեսքերի, համայնքի բնակիչների կարծիքներ վերաբերյալ:

«Նիգավա» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ն. Դավթյանը պատասխանեց, որ ՓՀԷԿ-Ի շինարարության և շահագործման ժամանակ կպահպանվեն ՀՀ-ում գործող բոլոր նորմերն և կանոններն, այդ թվում և անվտանգ շահագործման նորմերը և կձեռնարկեն հնարավոր բոլոր բնապահպանական մեղմացուցիչ միջոցառումները:

ՀՀ Արագածոտնի մարզի Կարբի համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ռ. Հակոբյանը նշեց որ ոռոգման համակարգին այս ՓՀԷԿ-Ի կառուցումը չի կարող խանգարել, քանի, որ ՓՀԷԿ-Ի ջրի վերադարձը գետ գտնվում է ոռոգման համակարգից մոտ 50կմ հեռավորության վրա, նա նաև նշեց, որ համայնքի բոլոր բնակիչներն էլ կողմ են ՓՀԷԿ-ի կառուցմանը:

«Նիգավա» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ն Դավթայանը նշեց ,որ կբացվեն մոտավորապես 15 աշխատատեղեր, ովքեր կներառվեն համայնքի բնակիչներից:

ՀՀ Արագածոտնի մարզ Կարբի ղեկավարի տեղակալ՝ Ռ. Հակոբյանը, աշխատակազմի քարտուղարը, ավագանու անդամները, համայնքի բնակիչները կարևորեցին ՓՀԷԿ_ի կառուցման դերն ու նշանակությունը, համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման գործում, մասնավորապես մատնանշելով ստեղծվելիք աշխատատեղերի կարևորությունը՝ պայմանով, որ մեղմացվեն շրջակա միջավայրի վրա ազդեցությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1.Հավանություն տալ ՀՀ Արագածոտնի մարզի <<Նիգավա>> ՍՊԸ-ին պատկանող <<Նիգավա>>ՓՀԷԿ- կառուցման գնահատման հայտին

2.Հավանություն տալ նախագծում նախատեսված բնապահպանական միջոցառումներին:

Քննարկումների պատասխանատու՝ ՀՀ Արագածոտնի մարզ Կարբի ղեկավարի տեղակալ՝ Ռ. Հակոբյան

Ձեռնարկող՝ «Նիգավա» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ն. Դավթայան

Վարող՝ <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>>ՊՈԱԿ-ի փորձագետ՝ Զ. Զուրնաչյան

Արձանագրող՝ աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Ա. Մարգարյան

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ 05001747

«ՆԻԳԱՎԱ» ՍՊԸ «НИГАВА» "NIGAVA" 02626677

Ներկաների քվեարկածների

ստորագրությունները

29. 04. 2015 թ.

1. Գ. Գրիգորյան [signature] (գլխավոր հաշվապահ)

2. Մ. Կարապետյան [signature] (աշխատավոր հաշվապահ)

3. Ռ. Սիմոնյան [signature] (ավագ գանձապահ)

4. Ա. Խաչատրյան [signature] (բանվոր)

5. Ա. Բաղդասարյան [signature] (բանվոր)

6. Է. Ճաղարյան [signature] (բանվոր)

7. Ա. Մանվելյան [signature] (բանվոր)

(«Շեգան» ընկերության մեջ աշխատողների ... ստորագրություններ)

05001747